



«Չանգեզուրի պոնդամոլիթրդենային կոմբինատ» ՓԲԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2014թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն	9



KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովին

Մենք իրականացրել ենք «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպության («Խումբ») կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:


Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:


Տիգրան Գազարյան
Տնօրեն


Տիգրան Գազարյան
Գործընկեր

KPMG Armenia 

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
20 մայիսի 2015թ.



հազ. դրամ	Ծնթգ.	2014թ.	2013թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	190,858,645	188,239,934
Մակաբացման գործունեության ակտիվ	14	2,242,217	-
Ոչ նյութական ակտիվներ		33,389	70,992
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	15	777,159	777,159
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	16	901,125	2,132,896
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	24	4,688,858	-
Հետախուզման և գնահատման ակտիվներ	17	28,874,607	27,228,012
Ստացվելիք ԱԱՀ		1,438,057	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		51,000	51,000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		229,865,057	218,499,993
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	18	10,494,694	10,056,716
Կանխավճարներ շահութահարկի գծով		2,137,047	7,665,365
Կանխավճարներ այլ հարկերի գծով		3,258,098	12,298,108
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	19	1,751,340	1,249,936
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	16	2,060,885	793,240
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20	939,473	522,300
Այլ ընթացիկ ակտիվներ		2,255	2,417
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		20,643,792	32,588,082
Ընդամենը ակտիվներ		250,508,849	251,088,075
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	21		
Բաժնետիրական կապիտալ		54,966,680	54,966,680
Զբաղիված շահույթ		81,674,499	89,595,361
Ընդամենը սեփական կապիտալ		136,641,179	144,562,041
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	37,296,389	42,537,416
Պահուստներ	23	3,306,152	2,135,420
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	23,746,398	22,533,293
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	24	-	3,953,866
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		64,348,939	71,159,995
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	25,027,055	16,803,870
Պահուստներ	23	158,223	-
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ		17,626,344	10,139,844
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	25	6,707,109	6,854,223
Դուրսոր կազմակերպության ձեռքբերման համար վճարվելիք գումարներ		-	1,568,102
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		49,518,731	35,366,039
Ընդամենը պարտավորություններ		113,867,670	106,526,034
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		250,508,849	251,088,075


«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնթգ.	2014թ.	2013թ.
Հասույթ	5	114,529,787	116,574,115
Վաճառքի ինքնարժեք	6	(70,302,219)	(79,047,084)
Համախառն շահույթ		44,227,568	37,527,031
Այլ եկամուտ		211,630	196,765
Իրացման ծախսեր		(4,138,714)	(3,991,941)
Վարչական ծախսեր	7	(6,205,574)	(4,923,987)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	8	(3,099,409)	(4,492,772)
Նախորդ տարիներին վերաբերող ռոյալթիների գծով ուղղում	9	(8,745,722)	-
Այլ ծախսեր	9	(18,813,647)	(12,023,856)
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ		-	(518,626)
Գործառնական գործունեության արդյունքները		3,436,132	11,772,614
Ֆինանսական եկամուտ	10	8,401,616	4,316,260
Ֆինանսական ծախսեր	10	(16,165,108)	(3,895,730)
Զուտ ֆինանսական (ծախսեր)/եկամուտ		(7,763,492)	420,530
(Վնաս)/շահույթ նախքան շահութահարկով հարկումը		(4,327,360)	12,193,144
Շահութահարկի գծով ծախս	12	(3,593,502)	(4,647,001)
(Վնաս)/շահույթ և ընդամենը համապարփակ (ծախս)/եկամուտ տարվա համար		(7,920,862)	7,546,143

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2015թ. մայիսի 20-ին և ստորագրվել են վերջինիս անունից:


Ն. Ս. Սարգսյան
Գլխավոր տնօրեն




Կարեն Կարապետյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 60-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Ջանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատ» ՓԲԸ
 Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Զբաղիսված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	54,966,680	114,695,471	169,662,151
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	7,546,143	7,546,143
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	-	(32,646,253)	(32,646,253)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	54,966,680	89,595,361	144,562,041
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	54,966,680	89,595,361	144,562,041
Վնաս և ընդամենը համապարփակ ծախս տարվա համար	-	(7,920,862)	(7,920,862)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	54,966,680	81,674,499	136,641,179

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է
 դիտարկվի 9-ից 60-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների
 բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Իրացումից ստացված գումարներ, ներառյալ ԱԱՀ-ն	129,469,794	130,355,476
Վճարումներ մատակարարներին	(64,524,918)	(58,693,215)
Վճարումներ աշխատակիցներին	(13,287,027)	(12,300,725)
Վճարումներ շահութահարկի գծով*	(4,165,010)	(8,193,095)
Վճարումներ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	(6,802,400)	(12,315,601)
Վճարումներ ռոյալթիների գծով	(9,136,723)	(15,895,000)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	(3,074,913)	(4,271,904)
Բանկային ծառայությունների վճարներ և վնասներ		
փոխարկումից	(49,786)	(58,294)
Այլ ստացված գումարներ	86,029	62,230
Այլ վճարումներ	(616,007)	(243,324)
Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից	27,899,039	18,446,548
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր		
Դուստր կազմակերպությունում ներդրման ձեռքբերում՝ առանց ձեռքբերված դրամական միջոցների	(1,568,102)	(2,041,800)
Հիմնական միջոցների ձեռքբերում	(12,412,386)	(15,539,697)
Վաճառքի համար մատչելի ակտիվների ձեռքբերում	-	(407,159)
Ավելացումներ հետախուզման և գնահատման ակտիվներին	(1,564,216)	(194,178)
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	97,798	109,278
Ստացված շահաբաժիններ	-	32,897
Ստացված տոկոսներ	12,422	15,670
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(15,434,484)	(18,024,989)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	8,241,905	62,141,158
Վարկերի և փոխառությունների մարումներ	(16,735,075)	(27,406,444)
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ՝ ներառյալ աղբյուրի մոտ գանձվող շահութահարկը	-	(32,646,253)
Վնաս շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	-	(164,892)
Վճարված տոկոսներ	(3,492,389)	(2,352,800)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(11,985,559)	(429,231)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	478,996	(7,672)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	522,300	897,203
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(61,823)	(367,231)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի (ծնթ. 20)	939,473	522,300

* Շահութահարկի գծով 7,312,934 հազար դրամ կանխավճարը հաշվանցվել է 2014թ. ընթացքում վճարման ենթակա ռոյալթիների դիմաց:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 60-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Հաշվետու կազմակերպություն

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպություն «Լեռ-Էքս» ՍՊԸ-ն («Խումբ») հանդիսանում են փակ բաժնետիրական ընկերություն և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել էր որպես պետական ձեռնարկություն 1952թ-ին: 2005թ. հունվարի 1-ին Ընկերությունը սեփականաշնորհվեց կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1677-Ա որոշման համաձայն:

Խմբի հիմնական գործունեության փաստացի վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան, Լեռնագործների փող. 18:

Խմբի հիմնական գործունեությունը հանքարդյունաբերությունն է, պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունը, որն իրացվում է Հայաստանում և արտասահմանում: Խմբի գործունեությունը կարգավորվում է Խմբի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության միջև կնքված Շահագործման և հետախուզման լիցենզիայի պայմանագրերով («Լիցենզիայի պայմանագրեր»): Լիցենզիայի պայմանագրերի համաձայն Խմբի գործունեությունը լիցենզավորված է մինչև 2030թ. (ծանոթագրություն 4 (բ)):

Խմբի սեփականատերեր են հանդիսանում «Քրոնիմետ Մայնինգ» Էյ-Ջի-ն (60%), «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ն (15%) (99.3% վերջնական սեփականատերն է հանդիսանում «Քրոնիմետ Հոլդինգ» ՍՊԸ-ն), «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ-ն (12.5%) և «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ-ն (12.5%) («Բաժնետերեր»):

Խմբի վերջնական մայր կազմակերպությունն է հանդիսանում «Քրոնիմետ Վերվալտունգ» ՍՊԸ-ն, որը վերահսկվում է Պիլարսկի ընտանիքի կողմից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 30-ում:

(ա) Գործարար միջավայր

Խումբն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Հաշվապահական հաշվառման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այս համախմբված ֆինանսական հաշվետվություններին ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկլարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 32 (Ժ) *Հիմնական միջոցներ* – արդյունքի միավորի մեթոդով մաշվածության հաշվարկներ
- Ծանոթագրություն 32 (Ժ) *Հիմնական միջոցներ* – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ
- Ծանոթագրություն 17 *Հետախուզման և գնահատման ակտիվներ* – հետախուզման և գնահատման ակտիվների փոխհատուցելիություն
- Ծանոթագրություն 9 *Այլ ծախսեր* – ռոյալթիների գնահատում
- Ծանոթագրություն 23 *Պահուստներ*

Այն ենթադրությունների և անորոշ գնահատումների վերաբերյալ գնահատումների մասին տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 4 (բ) *Հանքաքարի պաշարներ* – դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատման համար հիմք հանդիսացող հանքաքարի պաշարների գնահատում,
- Ծանոթագրություն 26 *Իրական արժեք և ռիսկերի կառավարում* – իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում դասակարգված ֆինանսական գործիքների իրական արժեքներ,
- Ծանոթագրություն 32 (բ) *Հասույթ* – պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքների որոշում:

(ա) Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 26-ում՝ «Իրական արժեք և ռիսկերի կառավարում»:

(ե) Հանքաքարի պաշարներ և շահագործման լիցենզիա

Հանքանյութի պաշարների քանակությունը գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ, ներառյալ Խմբի վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքանյութի պաշարների գնահատումները հիմնված են հորանցքներից և այլ հանքանցքներից ստացված հանքանյութի մուշտներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Խումբը շահագործում է Քաջարանում գտնվող հանքը և ունի Հանքասարում գտնվող հանքում հետախուզման աշխատանքներ իրականացնելու լիցենզիա: 2005թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական երկրաբանական ընկերության՝ «ԳեոԷկոնոմիկա» ՓԲԸ-ի կողմից Քաջարանի հանքաքարի պաշարները գնահատվել են 2,244,033 հազար տոննա և հաստատվել են Հայաստանի Հանրապետության Բնական ռեսուրսների պաշարների պետական կոմիտեի կողմից: Բացի այդ, որոշակի մետաղի շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ միներալիզացիայի ցածր աստիճան ունեցող հանքաքարի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքի հետագա օգտագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսերի փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի հանքաքարի պաշարների գնահատումների վրա:

Խմբի Քաջարանի հանքի գործունեությունը կարգավորվում է Խմբի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև 2008թ. հունիսի 28-ին կնքված Լիցենզիայի պայմանագրով: Լիցենզիայի պայմանագրի համաձայն Քաջարանի հանքի գործունեությունը լիցենզավորված է մինչև 2030թ.: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը ենթադրել է, որ Շահագործման լիցենզիայի գործողության ժամկետը կերկարաձգվի 2030թ-ից հետո: Այս ենթադրությունը հիմնված է Ընդերքի մասին օրենսգրքի դրույթների վրա, համաձայն որոնց Լիցենզիան կարող է երկարաձգվել ներկայացված դիմումի հիման վրա:

Խումբն ունի մեծ չանքասարում գտնվող հանքում հետախուզման գործունեություն իրականացնելու լիցենզիա: Հետախուզման գործունեությունը լիցենզավորված է մինչև 2015թ. օգոստոսի 13-ը: Ներկայումս Խումբը դիմում է ներկայացնում հետախուզման լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու համար: 2013թ. դեկտեմբերից Խումբը դադարեցրել է շահագործման աշխատանքները Հանքասարի հանքում և կենտրոնացրել է գործունեությունն այս տարածքում հետախուզման աշխատանքների իրականացման վրա: Պաշարների գնահատումները դեռևս առկա չեն: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը ենթադրել է, որ տարածքում կհայտնաբերվեն տնտեսապես նպատակահարմար պաշարներ, և Խումբը կստանա շահագործման լիցենզիա հետախուզման աշխատանքներն ավարտելուց հետո: Շահագործման լիցենզիա ստանալու վերաբերյալ ենթադրությունը հիմնված է Ընդերքի մասին օրենսգրքի դրույթների վրա, որոնք նախատեսում են շահագործման լիցենզիայի տրամադրում հետախուզման աշխատանքներից հետո, եթե Լիցենզիայի ժամկետի ընթացքում տեղի չեն ունեցել Լիցենզառուի պարտավորությունների էական խախտումներ:

Վերը նշված գնահատումները Խումբն օգտագործում է տեղանքի վերականգնման ժամկետները, հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները գնահատելիս և հետախուզման գործունեության լիցենզիայի ու հետախուզման ժամանակ օգտագործվող կամ հետախուզումից հետո օգտագործման ենթակա հիմնական միջոցների արժեզրկումը ստուգելիս:

5 Հասույթ

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Հասույթ խտանյութի վաճառքից	113,691,339	115,177,950
Հասույթ այլ արտադրանքի վաճառքից	838,448	1,396,165
Ընդամենը հասույթ	114,529,787	116,574,115

Հասույթ խտանյութի վաճառքից

	2014թ.		2013թ.	
	հազ. դրամ	Չոր մետրիկ տոննա	հազ. դրամ	Չոր մետրիկ տոննա
Մոլիբդենի խտանյութ	37,452,453	10,838	34,058,646	10,794
Պղնձի խտանյութ	76,238,886	137,209	81,119,304	132,744
	113,691,339	148,047	115,177,950	143,538

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 22,362,045 հազար դրամ գումարով պայմանականորեն գնանշվող վաճառք, որը բաղկացած էր 27,428 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից և 1,861 չոր մետրիկ տոննա մոլիբդենի խտանյութից (2013թ-ին՝ 21,832,793 հազար դրամ՝ բաղկացած 25,284 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից և 1,835 չոր մետրիկ տոննա մոլիբդենի խտանյութից), որի իրական արժեքը կազմում էր մոտավորապես 21,260,251 հազար դրամ՝ ներառյալ պարունակվող ածանցյալ գործիքը (2013թ-ին՝ 22,270,669 հազար դրամ):

Մոլիբդենի խտանյութի վաճառքի բոլոր գործարքները կատարվել են կապակցված կողմերի հետ (ծանոթագրություն 30):

6 Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Խտանյութի վաճառքի ինքնարժեք	69,392,749	77,665,815
Այլ վաճառքների ինքնարժեք	909,470	1,381,269
	70,302,219	79,047,084

Խտանյութի վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Նյութեր	32,344,151	34,326,703
Մաշվածություն	10,081,944	16,809,395
Աշխատավարձ	11,474,887	12,629,147
Էլեկտրաէներգիա և գազ	10,482,832	8,453,918
Ստացված ծառայություններ	4,693,597	5,226,718
Այլ	229,272	176,647
Բնապահպանական վճարներ	42,113	43,287
Պատրաստի արտադրանքի և անավարտ արտադրանքի արժեզրկում	43,953	-
	69,392,749	77,665,815

7 Վարչական ծախսեր

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Աշխատավարձ	3,110,750	2,307,434
Ներքին տեղափոխման և ավտոմեքենաների սպասարկման ծախսեր	601,387	699,514
Ապահովագրության ծախսեր և բանկային ծառայությունների վճարներ	579,532	531,656
Մաշվածություն, ամորտիզացիա և պահպանման ծախսեր	80,385	57,480
Այլ վարչական ծախսեր	1,833,520	1,327,903
	6,205,574	4,923,987

8 Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Նվիրատվության ձևով տրամադրված դրամական միջոցներ	2,804,896	4,417,437
Նվիրատվության ձևով տրամադրված հիմնական միջոցներ, պաշարներ և այլ նվիրատվություններ	294,513	75,335
	3,099,409	4,492,772

Խումբը հատկացումներ է կատարում համայնքի տարբեր սոցիալական ծրագրերին ու կազմակերպություններին:

9 Այլ ծախսեր

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Ռոյալթիների գծով վճարումներ	14,521,802	9,380,673
Արձակման նպաստներ	1,329,021	-
Աշխատակիցների հատուցումներ՝ բացառությամբ աշխատավարձի	971,199	817,690
Երաշխիքային պահուստի գծով ծախս	595,770	-
Մաշվածության ծախս	459,018	189,317
Աշխատավարձ	225,803	-
Հիմնական միջոցների դուրսգրում	136,570	512,827
Պաշարների արժեքի նվազեցում	78,832	358,989
Այլ	495,632	764,360
	18,813,647	12,023,856

2015թ. ընթացքում դեկավարությունը պարզաբանում է ստացել հարկային մարմիններից ռոյալթիների վճարումների հաշվարկի մեթոդի վերաբերյալ, քանի որ համապատասխան օրենքում կան անորոշություններ կապված մեթոդաբանության հետ:

Դեկավարությունը համաձայնվել է հարկային մարմինների դիրքորոշման հետ և վերահիշվարկել է 2012 և 2013թթ. ռոյալթիների գծով ծախսերը: Արդյունքում, հարկային մարմիններին ներկայացվել են փոփոխված հայտարարագրեր, և Խմբի հարկերի գծով կանխավճարների մնացորդները նվազեցվել են ուղղված գումարի չափով: Ուղղման արդյունքում առաջացել է 8,745,722 հազար դրամ ռոյալթիների գծով լրացուցիչ ծախս, որը վերաբերում է 2012 և 2013 տարիներին:

Եթե նախորդ տարիներին վերաբերող 8,745,722 հազար դրամ ռոյալթիների գծով լրացուցիչ վճարումները չհաշվառվեին 2014թ-ին, ապա 2014թ. նախքան հարկումը շահույթը կկազմեր 4,418,362 հազար դրամ, իսկ 2014թ. զուտ վնասը՝ 924,284 հազար դրամ:

Ռոյալթիների գծով ծախսերը բաղկացած են երկու բաղադրիչից.

- հասույթի 4%-ի չափով հաշվարկված ռոյալթի 5,808,732 հազար դրամ գումարով (2013թ. վերահաշվարկված ծախս՝ 5,915,447 հազար դրամ, 2012թ. վերահաշվարկված ծախս՝ 5,624,744 հազար դրամ),
- հարկվող շահույթի 12.5%-ի չափով հաշվարկված ռոյալթի 8,625,811 հազար դրամ գումարով (2013թ. վերահաշվարկված ծախս՝ 10,145,722 հազար դրամ, 2012թ. վերահաշվարկված ծախս՝ 9,600,939 հազար դրամ):

Հասույթի ու հարկվող շահույթի գծով ճշգրտումները կատարվել են կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների ու պահանջների համաձայն:

10 Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Ջուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	8,220,997	4,267,693
Ֆինանսական եկամուտ արձակման նպաստների պահուստի գծով կիրառված գեղչի փոփոխությունից	168,197	-
Եկամուտ շահաբաժինների գծով	-	32,897
Տոկոսային եկամուտ բանկային ավանդների գծով	12,422	15,670
Ֆինանսական եկամուտ	8,401,616	4,316,260
Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով	(4,882,241)	(3,137,757)
Տեղանքի վերականգնման պահուստի գծով գեղչի ծախսագրում	(179,091)	(201,131)
Ջուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(11,103,776)	(556,842)
Ֆինանսական ծախսեր	(16,165,108)	(3,895,730)
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական (ծախսեր)/եկամուտ	(7,763,492)	420,530
Ժամանակաշրջանի ընթացքում կապիտալացված փոխառության ծախսումներ	(1,485,905)	(949,570)

Կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը հաշվարկելու համար օգտագործվել է 11.4% կապիտալացման դրույքը (2013թ-ին՝ 10.4%): Կապիտալացման դրույքը սահմանվել է որպես Խմբի 2014թ. փոխառությունների նկատմամբ կիրառելի փոխառությունների դրույքերի կշռված միջին:

11 Աշխատակազմի գծով ծախսեր

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Աշխատավարձ	17,245,965	16,248,176
Արձակնան նպաստներ	1,329,021	-
Աշխատակիցների հատուցումներ՝ բացառությամբ աշխատավարձի	971,199	817,690
	19,546,185	17,065,866

12 Շահութահարկի գծով ծախս

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է 20% դրույքով (2013թ-ին՝ 20%)։

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	3,990,367	4,962,955
Նախորդ տարիներին ավել հաշվարկված ընթացիկ հարկի գծով ծախս	(1,609,969)	-
	2,380,398	4,962,955
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	1,213,104	(315,954)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	3,593,502	4,647,001

Գործող հարկային դրույքի համադրում

	2014թ.		2013թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
(Վնաս)/շահույթ նախքան հարկումը	(4,327,360)	100	12,193,144	100
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	(865,472)	20	2,438,629	20
Չնվազեցվող ծախսեր	4,333,243	(101)	1,570,842	13
Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և հարկային վնասների փոփոխություն	125,731	(2)	637,530	5
	3,593,502	(83)	4,647,001	38

Նախորդ տարիներում ավել ներկայացված հարկի գծով ծախսը վերաբերում է 2012թ. և 2013թ. ռոյալթիների գծով վճարումների հետընթաց ճշգրտմանը (ծանոթագրություն 9)։

«Ջանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատ» ՓԲԸ
 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

(բ) Դաճաճված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին.

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.
Հիմնական միջոցներ	-	-	(17,524,339)	(17,216,242)	(17,524,339)	(17,216,242)
Հետախուզման և գնահատման ակտիվներ (հետախուզման լիցենզիա)	-	-	(5,378,162)	(5,378,162)	(5,378,162)	(5,378,162)
Պաշարներ	61,177	65,042	-	-	61,177	65,042
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	-	(5,071)	-	(5,071)	-
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ	548,501	129,650	-	-	548,501	129,650
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	149,175	121,200	-	-	149,175	121,200
Վարկեր և փոխառություններ	-	-	(1,046,995)	(1,472,638)	(1,046,995)	(1,472,638)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	790,773	(937,772)	-	(937,772)	790,773
Պահուստներ	387,088	427,084	-	-	387,088	427,084
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	1,145,941	1,533,749	(24,892,339)	(24,067,042)	(23,746,398)	(22,533,293)
Հարկերի հաշվանցում	(1,145,941)	(1,533,749)	1,145,941	1,533,749	-	-
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	-	-	(23,746,398)	(22,533,293)	(23,746,398)	(22,533,293)

«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

(գ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

հազ. դրամ	1 հունվարի 2014թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2014թ.
Հիմնական միջոցներ	(17,216,242)	(308,097)	(17,524,339)
Հետախուզման և գնահատման ակտիվներ (հետախուզման լիցենզիա)	(5,378,162)	-	(5,378,162)
Պաշարներ	65,042	(3,865)	61,177
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	(5,071)	(5,071)
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ	129,650	418,851	548,501
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	121,200	27,975	149,175
Վարկեր և փոխառություններ	(1,472,638)	425,643	(1,046,995)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	790,773	(1,728,545)	(937,772)
Պահուստներ	427,084	(39,996)	387,088
	(22,533,293)	(1,213,105)	(23,746,398)

հազ. դրամ	1 հունվարի 2013թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2013թ.
Հիմնական միջոցներ	(18,386,132)	1,169,890	(17,216,242)
Հետախուզման և գնահատման ակտիվներ (հետախուզման լիցենզիա)	(5,378,162)	-	(5,378,162)
Պաշարներ	12,462	52,580	65,042
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	8,726	(8,726)	-
Պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճարներ	123,044	6,606	129,650
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	192,000	(70,800)	121,200
Վարկեր և փոխառություններ	28,033	(1,500,671)	(1,472,638)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	198,033	592,740	790,773
Պահուստներ	352,749	74,335	427,084
	(22,849,247)	315,954	(22,533,293)

(դ) Զճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել հետևյալ հոդվածների գծով.

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Նվազեցվող ժամանակավոր տարբերություններ	1,822,784	2,106,724
Հարկային վնաս (հաջորդ ժամանակաշրջան փոխանցելու իրավունքը լրանում է 2017թ-ին)	686,752	686,752
Հարկային վնաս (հաջորդ ժամանակաշրջան փոխանցելու իրավունքը լրանում է 2018թ-ին)	2,711,199	2,711,199
Հարկային վնաս (հաջորդ ժամանակաշրջան փոխանցելու իրավունքը լրանում է 2019թ-ին)	912,597	-
	6,133,332	5,504,675

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները գործողության ժամկետ չունեն: Խմբի դուստր կազմակերպության նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և հարկային վնասների գծով հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել, քանի որ անորոշ է, արդյոք կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց դուստր կազմակերպությունը կկարողանա իրացնել այդ հոդվածներից ստացված օգուտը: Ներկայումս Խումբը հետախուզման աշխատանքներ է իրականացնում Հանքասարի հանքի մոտակայքում գտնվող տարածքում, և պաշարների գնահատումներ դեռևս առկա չեն: Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և հարկային վնասների ապագա օգտագործումը կախված է նշված տարածքում տնտեսապես նպատակահարմար պաշարների առկայությունից և հետախուզման աշխատանքների տևողությունից:

13 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Մեքենա- սարքավոր- ումներ	Հանքարդյունա- բերական ակտիվներ	Տնտեսական գույք	Ամալարտ շինարարություն	Ընդամենը
Եղակնտային արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	55,752,874	161,013,422	2,028,626	601,796	35,408,026	254,804,744
Ավելացումներ	329,277	3,720,179	55,092	32,304	12,555,779	16,692,631
Օտարումներ	-	(1,889,036)	-	(2,910)	(361,839)	(2,253,785)
Փոխանցումներ	125,080	7,909,580	(64,087)	2,699	(7,973,272)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	56,207,231	170,754,145	2,019,631	633,889	39,628,694	269,243,590
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	56,207,231	170,754,145	2,019,631	633,889	39,628,694	269,243,590
Ավելացումներ	152,187	1,591,164	218,113	60,456	12,451,000	14,472,920
Օտարումներ	-	(3,446,436)	-	(14,401)	(157,784)	(3,618,621)
Փոխանցումներ	104,303	1,381,255	7,932	125	(1,493,615)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	56,463,721	170,280,128	2,245,676	680,069	50,428,295	280,097,889
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	8,696,322	55,287,284	10,187	345,703	-	64,339,496
Տարվա մաշվածություն	2,199,038	15,432,163	29,239	83,467	-	17,743,907
Արժեզրկումից կորուստ	58,332	460,294	-	-	-	518,626
Օտարումներ	-	(1,595,605)	-	(2,768)	-	(1,598,373)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	10,953,692	69,584,136	39,426	426,402	-	81,003,656
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	10,953,692	69,584,136	39,426	426,402	-	81,003,656
Տարվա մաշվածություն	1,580,013	9,524,273	32,820	77,924	-	11,215,030
Օտարումներ	-	(2,967,108)	-	(12,334)	-	(2,979,442)
Փոխանցումներ	74,468	(74,468)	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	12,608,173	76,066,833	72,246	491,992	-	89,239,244
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2013թ.	47,056,552	105,726,138	2,018,439	256,093	35,408,026	190,465,248
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	45,253,539	101,170,009	1,980,205	207,487	39,628,694	188,239,934
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	43,855,548	94,213,295	2,173,430	188,077	50,428,295	190,858,645

10,081,944 հազար դրամ (2013թ-ին՝ 16,809,395 հազար դրամ) գումարով մաշվածության ծախսը ճանաչվել է վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում, 44,272 հազար դրամ (2013թ-ին՝ 48,569 հազար դրամ) գումարով՝ վարչական ծախսերի կազմում և 459,018 հազար դրամ գումարով (2013թ-ին՝ 189,317 հազար դրամ)՝ այլ ծախսերի կազմում:

2014թ. ընթացքում 1,485,905 հազար դրամ գումարով փոխառության ծախսումները (2013թ-ին՝ 949,570 հազար դրամ) կապիտալացվել են անավարտ շինարարության վրա:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 34,102,270 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են գրավով ապահովված բանկային վարկի դիմաց (ծանոթագրություն 22):

(ա) Արժեզրկումից կորուստ

2013թ. ընթացքում Խումբը դադարեցրել է Հանքասարի հանքի շահագործումը, քանի որ արդյունահանված պղնձի և մոլիբդենի փաստացի չափաբաժինը զգալիորեն ցածր էր շահագործման լիցենզիայում նշվածից, ինչը հանգեցնում էր գործառնությունների բացասական մարժայի: Միաժամանակ, ներկայիս աշխատուժը պահպանելու նպատակով, Խումբը սկսել է օգտագործել այս հիմնական միջոցները Քաջարանի հանքից արդյունահանված և տեղափոխված հանքաքարը վերամշակելու համար: Արդյունքում, այս գործունեության համար ձեռք են բերվել նաև նոր հիմնական միջոցներ: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի գնահատմամբ Հանքասարի կոմբինատում Քաջարանի հանքից բերված հանքաքարի վերամշակման համար օգտագործվող 1,059,277 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները արժեզրկված են: Այս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվել է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Քանի որ դրամական միջոցների հոսքերի ստուգման արդյունքում գրանցվել է ավելի ցածր արժեք, հիմնական միջոցների յուրաքանչյուր առանձին միավորի համար փոխհատուցվող գումարը գնահատվել է որպես իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Ղեկավարության գնահատմամբ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մշակման գործընթացին վերաբերող այս ակտիվների փոխհատուցվող գումարը կազմում է 540,651 հազար դրամ: 518,626 հազար դրամ գումարով արժեզրկումից կորուստը բաշխվել է այն առանձին ակտիվներին, որոնց անհատապես վերագրելի էր արժեզրկումը: Հետագայում, 2014թ. օգոստոսին Խումբը դադարեցրել է պղնձի և մոլիբդենի արտադրությունը Հանքասարի հանքի մոտակայքում գտնվող գործարանում: 2014թ-ին լրացուցիչ արժեզրկում չի գրանցվել, քանի որ հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ղեկավարությունը որոշել է, որ հիմնական միջոցների այլ միավորները, մասնավորապես հանքարդյունաբերական ակտիվները և հարակից սարքավորումները, կօգտագործվեն հետախուզման աշխատանքների ավարտից հետո, եթե հետախուզման տարածքում հայտնաբերվի տնտեսապես նպատակահարմար պաշարների բավարար ծավալ: Այդ իսկ պատճառով, ղեկավարությունը գտնում է, որ հանքարդյունաբերական ակտիվների և հարակից սարքավորումների հետ կապված չկան արժեզրկման հայտանիշներ 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(բ) Գնահատումների փոփոխություն

2014թ. հունվարի 1-ի դրությամբ Խումբն իրականացրել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների տարեկան ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով նախկինում կիրառվող օգտագործման ձևերի վերլուծությունը: Այս ուսումնասիրության արդյունքում կատարվել են փոփոխություններ շենքերի և մեքենա-սարքավորումների որոշ միավորների ակնկալվող օգտագործման հետ կապված:

Արդյունքում, այս ակտիվների օգտակար ծառայության ակնկալվող ժամկետներն երկարացվել են: Ստորև ներկայացված է նշված փոփոխությունների ազդեցությունը վաճառքի ինքնարժեքի կազմում ճանաչված մաշվածության ծախսի վրա հաշվետու և հետագա ժամանակաշրջաններում:

հազ. դրամ	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	Հետագա տարիներ
Մաշվածության ծախսի նվազեցում	3,740,387	3,174,724	2,992,163	2,941,315	38,415,164

14 Մակաբացման գործունեության ակտիվ

2014թ-ին Խումբը սկսել է ինտենսիվ մակաբացման գործունեություն Քաջարանի հանքի Շրջկուտ հատվածում, որտեղ գալիք տարիներին ակնկալվում է արդյունահանել հանքաքար: Խումբը կապիտալացրել է Շրջկուտ հատվածին վերաբերող 2,242,217 հազար դրամ գումարով նախաարտադրական մակաբացման ծախսումները որպես մակաբացման գործունեության ակտիվ:

15 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Իրական արժեքով չափվող վաճառքի համար մատչելի ներդրումներ	777,159	777,159

Վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումների 777,159 հազար դրամ գումարով իրական արժեքը որոշվել է այդ ներդրումների գնանշվող շուկայական գների հիման վրա: Այս ներդրումները ցուցակագրված են «ՆԱԶԳԱԿ ՕԷմԷքս Արմենիա» ընկերությունում:

Խմբի ենթարկվածությունը պարտքային, արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերին վաճառքի համար մատչելի ներդրումների հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

16 Կանխավճարներ և փոխատվություններ

հազ. դրամ	2014թ.	2013թ.
<i>Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով</i>		
Կանխավճարներ հիմնական միջոցների գծով	901,125	2,132,896
<i>Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով</i>		
Կանխավճարներ պաշարների գծով	1,102,044	599,434
Այլ	958,841	193,806
	2,060,885	793,240
	2,962,010	2,926,136

17 Հետախուզման և գնահատման ակտիվներ

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Ձեռնարկատիրական գործունեության միավորման միջոցով ձեռքբերված հետախուզման լիցենզիա	26,936,526	26,936,526
Հետախուզման և գնահատման այլ ծախսեր	1,938,081	291,486
	28,874,607	27,228,012

Հետախուզման գործունեություն իրականացնելու լիցենզիան վերաբերում է Սյունիքի մարզում, Հանքասարի մոտակայքում գտնվող հանքի տարածքին: Հետախուզման գործունեություն իրականացնելու լիցենզիայի շրջանակներում իրականացվող գործունեությունը կարգավորվում է Խմբի և ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության միջև 2013թ. նոյեմբերի 13-ին կնքված Լիցենզիայի պայմանագրով: Լիցենզիայի պայմանագրի համաձայն Խմբի հետախուզման գործունեությունը լիցենզավորված է մինչև 2015թ. օգոստոսի 13-ը: Ներկայումս Խումբը դիմում է ներկայացնում հետախուզման լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու համար:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,938,081 հազար դրամ գումարով հետախուզման և գնահատման այլ ծախսերը (2013թ-ին՝ 291,486 հազար դրամ) վերաբերում են հանքաքարի հնարավոր պաշարների հետախուզմանը և գնահատմանը և ներառում են արտաքին ընկերության կողմից հետախուզման նպատակով իրականացված հորատման աշխատանքներին վերաբերվող ծախսումները:

18 Պաշարներ

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Հումք և սպառողական նյութեր	5,804,872	4,487,398
Պահեստամասեր	3,699,156	4,037,451
Պատրաստի արտադրանք	365,637	711,821
Շինանյութ	132,037	131,237
Անավարտ արտադրանք	-	27,664
Այլ	492,992	661,145
	10,494,694	10,056,716
Պաշարների արժեզրկում հաշվետու տարում	(78,832)	(358,989)

19 Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Առևտրական դեբիտորական պարտքեր - խտանյութի վաճառք	558,848	-
Առևտրական դեբիտորական պարտքեր - այլ արտադրանքի վաճառք	102,334	207,132
Այլ դեբիտորական պարտքեր	235,732	60,125
Փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասակարգում ներառված առևտրական և այլ դեբիտորական պարտքերում	896,914	267,257
Փոխհատուցելի ԱԱՀ	854,426	982,679
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	1,751,340	1,249,936

Խմբի ենթարկվածությունը պարտքային և արտաբժույթի ռիսկերին ու առևտրական և այլ դեբիտորական պարտքերին վերաբերող արժեզրկումից կորուստները ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

20 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Կանխիկը դրամարկղում	3,055	100
Ընթացիկ բանկային հաշիվներ	936,418	522,200
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում արտացոլված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	939,473	522,300

Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների գգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

21 Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

	Սովորական բաժնետոմսեր	
	2014թ.	2013թ.
<i>Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն նշված չէ</i>		
Հայտարարված բաժնետոմսեր		
Անվանական արժեք	20,000 ՀՀ դրամ	20,000 ՀՀ դրամ
Հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	2,748,334	2,748,334

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Խմբի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Խմբի ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով՝ բացառությամբ չբաշխված շահույթի գծով գործող ստորև ներկայացված սահմանափակումների:

Օրենսդրական պահանջների համաձայն Խումբն իր չբաշխված շահույթից պետք է ստեղծի բաշխման ոչ ենթակա պահուստ՝ բաժնետիրական կապիտալի 15%-ին հավասար գումարի չափով՝ ապագա վնասները ծածկելու նպատակով:

2014թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել: 2013թ-ին հայտարարվել են սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վճարվելիք 32,646,253 հազար դրամ ընդհանուր գումարով շահաբաժիններ կամ 11,879 դրամ՝ յուրաքանչյուր թողարկված բաժնետոմսի համար:

22 Վարկեր և փոխառություններ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Խմբի ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

հազ. դրամ	2014թ.	2013թ.
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		
Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր	37,296,389	40,103,576
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից	-	2,433,840
	37,296,389	42,537,416
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>		
Գրավով ապահովված բանկային վարկեր և վարկային գծեր	22,647,431	15,411,573
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից	2,379,624	1,392,297
	25,027,055	16,803,870

«Ջանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատ» ՓԲԸ
 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2013թ. սեպտեմբերին Խումբը ստացել է 150,000 հազար ԱՄՆ դոլար գումարով սինդիկացված վարկ Եվրոպական ֆինանսական կազմակերպություններից: Վարկը մասամբ օգտագործվել է՝ 2011թ-ին Եվրոպական ֆինանսական կազմակերպություններից ստացված 75,000 ԱՄՆ դոլար գումարով սինդիկացված վարկը մարելու համար: Դեկավարության գնահատմամբ նոր սինդիկացված վարկի պայմաններն էականորեն չեն տարբերվում մարված վարկի պայմաններից: Այդ իսկ պատճառով, մարված գումարի ներկա արժեքի և մարման ամսաթվի դրությամբ վարկի ամորտիզացված արժեքի միջև առաջացած 613,098 հազար դրամ գումարով տարբերությունը ճանաչվել է որպես արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում և ամորտիզացվել է նոր սինդիկացված վարկի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Վարկի դիմաց գրավադրված են Խմբի հիմնական միջոցները (ծանոթագրություն 13) և պատվիրատուների հետ կնքված պղնձի խտանյութի վաճառքի պայմանագրերը: Միաժամանակ, Խումբը կնքել է առքի և վաճառքի օպցիոնների պայմանագիր՝ գրավի գնի փոփոխության հետ կապված բանկային ռիսկը կառավարելու նպատակով (ծանոթագրություն 23):

Բանկային վարկային գծի համար ապահովություն են ծառայում Խմբի բանկային հաշիվների մնացորդները:

(ա) Պայմաններ և մարման ժամկետներ

Ստորև ներկայացված են դեռևս չմարված վարկերի և փոխառությունների պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ տոկոսադր.	Մարման տարին	31 դեկտեմբերի 2014թ.		31 դեկտեմբերի 2013թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	Libor+4.95%	2018	56,705,602	51,470,664	60,852,217	53,482,805
Գրավով ապահովված բանկային վարկային գիծ	ԱՄՆ դոլար	8%	2015	4,237,313	4,237,313	-	-
Գրավով ապահովված բանկային վարկային գիծ	ԱՄՆ դոլար	8%	2015	4,235,843	4,235,843	-	-
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից	ԱՄՆ դոլար	Libor+4.95%	Ցպահանջ	2,379,624	2,379,624	-	-
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից	ԱՄՆ դոլար	Libor+7%	2017	-	-	3,418,545	3,418,545
Գրավով ապահովված բանկային վարկային գիծ	ԱՄՆ դոլար	10%	2014	-	-	2,032,344	2,032,344
Գրավով չապահովված փոխառություններ բաժնետիրոջից	ԱՄՆ դոլար	Libor+8%	2014	-	-	407,592	407,592
Ընդամենը տոկոսակիր պարտավարություններ				67,558,382	62,323,444	66,710,698	59,341,286

23 Պահուստներ

հազ. դրամ	Տեղանքի վերականգնման գծով պահուստ	Ֆինանսական երաշխյքի գծով պահուստ	Աշխատակիցների արձակման նպաստներ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի	2,135,420	-	-	2,135,420
Տարվա ընթացքում (հակադարձված)/ ծևավորված պահուստ	-	595,770	1,329,021	1,924,791
Տարվա ընթացքում օգտագործված պահուստ	-	-	(410,808)	(410,808)
Ջեղչի դրույքի փոփոխման ազդեցությունը	(351,991)	-	(168,197)	(520,188)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը	-	-	156,069	156,069
Ջեղչի ծախսագրում	152,011	-	27,080	179,091
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	1,935,440	595,770	933,165	3,464,375
Ոչ ընթացիկ	1,777,217	595,770	933,165	3,306,152
Ընթացիկ	158,223	-	-	158,223

(ա) Տեղանքի վերականգնում

Տեղանքի վերականգնման գծով պահուստը վերաբերում է հանքի շահագործման և խտանյութի արդյունահանման նպատակով պոչամբարի (Արծվանիկի պոչամբար) օգտագործման ընթացքում աղտոտված հողատարածքը վերականգնելու խմբի կառուցողական պարտականությանը:

Նշված պարտականությունը կատարելու համար պահանջվող դրամական միջոցների հոսքերի ընդհանուր գնահատված գումարը կազմում է 3,390,753 հազար դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի համար կանխատեսվող սղաճի միջին 3.9% դրույքը: Ուրբ տարի ժամկետում կատարվելիք վերականգնման ծախսերի գծով կիրառվել է տարեկան 9.5% զեղչ: Պահուստի ժամկետները որոշվել են՝ հիմք ընդունելով 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող պոչամբարի հետ կապված վերականգնման պարտականության կատարման ժամկետների ղեկավարության գնահատականը: Ջեղչի դրույքն իրենից ներկայացնում է ռիկի գործոն չպարունակող անվանական դրույք (ՀՀ կառավարության երկարաժամկետ պարտատոմսերի համար կիրառվող դրույք)՝ ճշգրտված երկրի համար սահմանված ռիսկի հավելվածով:

Պահուստն նվազել է ի համեմատություն 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ճանաչված գումարի, ինչը պայմանավորված է գնահատված տարեկան զեղչի դրույքի փոփոխություններով: Գնահատումների այս փոփոխությունների արդյունքում առաջացած տեղանքի վերականգնման գծով պահուստի նվազումը ճանաչվել է որպես համապատասխան ակտիվի նվազում:

2013թ. ընթացքում հայկական հանքարդյունաբերական ընկերությունների տեղանքի վերականգնման պարտականությունները պարզաբանվել և իրավաբանորեն կատարման ենթակա են դարձել՝ Հանքարդյունաբերության մասին վերանայված օրենքի համաձայն: Վերանայված օրենքը սահմանում է համակարգ, որի շրջանակներում Խումբը պետք է վճարումների կատարի համապատասխան պետական հիմնադրամին: Պահանջվող վճարումների հաշվարկն իրականացվում է առանձին իրավական ակտով՝ կառավարության

կողմից սահմանված բանաձևի համաձայն: 2013թ. փետրվարի 11-ին կառավարությունը հրապարակեց տեղանքի վերականգնման պարտականության գծով վճարումների հաշվարկին վերաբերող իրավական ակտ, որը պետք է պատրաստվի ղեկավարության կողմից և հաստատվի պետական մարմինների կողմից: Այս ֆինանսական վիճակի համախմբված հաշվետվության ամսաթվի դրությամբ ղեկավարությունը դեռ չէր ուղարկել նշված հաշվարկը պետական մարմինների հաստատմանը:

Խումբը չի ձևավորել պահուստ հանքի ամբողջ տարածքին վերաբերող տեղանքի վերականգնման պարտականության համար, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ այս պարտականության ներկա արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ էական չի լինի այս ֆինանսական վիճակի առանձին հաշվետվության համար: Դեկավարության գնահատականները հիմնված են այն փաստի վրա, որ տեղանքի վերականգնման աշխատանքները չեն իրականացվելու մոտ ապագայում: Ելնելով հանքաքարի պաշարների գնահատումներից (ծանոթագրություն 4 (բ))՝ արդյունահանման ներկայիս մակարդակով հանքաքարի ներկայիս պաշարները բավարար կլինեն ավելի քան 100 տարի օգտագործման համար:

(բ) Ֆինանսական երաշխիք

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երաշխիքի գծով պահուստը վերաբերում է երրորդ անձի կողմից հայկական բանկից ստացված վարկի համար Խմբի կողմից տրված երաշխիքին: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ճանաչել է պահուստ տրված երաշխիքի ամբողջ գումարի գծով, քանի որ կան հայտանիշներ, որ երաշխիքի շահառուն ի վիճակի չի լինելու կատարել իր պարտավորությունները: 734,000 հազար դրամ գումարով երաշխիքը զեղչելու համար կիրառվել է տարեկան 10.3% զեղչման դրույք՝ 2 տարի ժամկետով:

Պահուստի ժամկետները որոշվել են հիմք ընդունելով դատական վարույթի տևողության ղեկավարության գնահատականը:

(գ) Աշխատակիցների արձակման նպաստներ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների արձակման նպաստների գծով պահուստը վերաբերում է Խմբի նախկին ղեկավարությանը 1,779,667 հազար դրամ գումար վճարելու Խմբի պայմանագրային պարտականությանը՝ 2014թ. հուլիսին վերջիններիս աշխատանքային պայմանագրերի դադարեցման հետ կապված: Հետագայում այս աշխատակիցները Խմբում ստացել են տարբեր նոր նշանակումներ, և արձակման նպաստների վճարումը հետաձգվել է մինչև ներկայումս գործող աշխատանքային պայմանագրերի դադարեցումը:

1-ից 7 տարի ժամանակաշրջանում կատարման ենթակա վճարումների զեղչման համար կիրառվել է տարեկան 6.5% զեղչման դրույք՝ հիմք ընդունելով նոր աշխատանքային պայմանագրերի դադարեցման ժամկետների ղեկավարության գնահատականը:

24 Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

4,688,858 հազար դրամ գումարով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները (2013թ-ին՝ 3,953,866 հազար դրամ գումարով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ) իրենցից ներկայացնում են երեք պայմանագրային կողմերի հետ պղնձի առքի և վաճառքի օպցիոնների իրական արժեքը: Օպցիոնների ժամկետը լրանում է 2017թ. դեկտեմբերին:

Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ օպցիոնի գնորոշման մոդելի միջոցով որոշված 5,752,343 հազար դրամ (14,135,606 ԱՄՆ դոլար) գումարով իրական արժեքը դիտարկվել է որպես գործարքի գին և ներառվել է վարկի ամորտիզացված արժեքում (ծանոթագրություն 22), քանի որ դեկավարությունը գտնում է, որ ֆինանսական գործիքի գծով կրած սկզբնական վնասը կազմում է վարկի ձեռքբերման ծախսերի մասը:

Խմբի ենթարկվածությունը պարտքային, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

25 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Պաշարների և հիմնական միջոցների ձեռքբերման համար վճարվելիք գումարներ	5,256,910	4,847,462
«Այլ ֆինանսական պարտավորություններ» դասակարգում ներառված առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	5,256,910	4,847,462
Վճարվելիք աշխատավարձ և հարակից հարկեր	791,629	1,581,157
Վճարվելիք աղբյուրի մոտ գանձվող շահութահարկ	165,483	44,473
Վճարվելիք ռոյալթիներ	95,363	-
Այլ վճարվելիք գումարներ և հաշվեգրված ծախսեր	397,724	381,131
Այլ վճարվելիք գումարներ	1,450,199	2,006,761
	6,707,109	6,854,223

Խմբի ենթարկվածությունը արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

26 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները՝ հաշվեկշռային արժեքների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ծնթգ.	Փոխառություններ և դեբիտորական պարտքեր	Այլ ֆինանսական պարտավոր- ություններ	Ընդամենը հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
31 դեկտեմբերի 2014թ.					
Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20	936,418	-	936,418	936,418
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	19	896,914	-	896,914	896,914
		<u>1,833,332</u>	<u>-</u>	<u>1,833,332</u>	<u>1,833,332</u>
Իրական արժեքով չչափվող ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	22	-	62,323,444	62,323,444	62,323,444
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	25	-	5,256,910	5,256,910	5,256,910
		<u>-</u>	<u>67,580,354</u>	<u>67,580,354</u>	<u>67,580,354</u>
հազ. դրամ	Ծնթգ.	Փոխառություններ և դեբիտորական պարտքեր	Այլ ֆինանսական պարտավոր- ություններ	Ընդամենը հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
31 դեկտեմբերի 2013թ.					
Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20	522,200	-	522,200	522,200
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	19	267,257	-	267,257	267,257
		<u>789,457</u>	<u>-</u>	<u>789,457</u>	<u>789,457</u>
Իրական արժեքով չչափվող ֆինանսական պարտավորություններ					
Վարկեր և փոխառություններ	22	-	59,341,286	59,341,286	59,341,286
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	25	-	4,847,462	4,847,462	4,847,462
		<u>-</u>	<u>64,188,748</u>	<u>64,188,748</u>	<u>64,188,748</u>

(բ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
31 դեկտեմբերի 2014թ.				
Վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ	-	(852,600)	(249,195)	(1,101,795)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	777,159	-	-	777,159
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	-	4,688,858	4,688,858
	777,159	(852,600)	4,439,663	4,364,222

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
31 դեկտեմբերի 2013թ.				
Վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ	-	431,666	6,210	437,876
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	777,159	-	-	777,159
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	-	(3,953,866)	(3,953,866)
	777,159	431,666	(3,947,656)	(2,738,831)

2-րդ մակարդակ. Պղնձի վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ

Պղնձի խտանյութի վաճառքին վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը հաշվարկվել է՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ մետաղների շուկաներում գնանշվող ֆորվարդային գները:

3-րդ մակարդակ. Պղնձի «քոլարներ»

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է պղնձի «քոլարների» իրական արժեքի չափումների տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը:

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Մնացորդը առ 1 հունվարի	(3,953,866)	(990,164)
Շահույթում կամ վնասում ճանաչված ընդամենը օգուտ՝ մինչև տարեվերջ առկա 3-րդ մակարդակի գործիքներից	8,220,997	4,267,693
2013թ-ին լրացած օպցիոնների սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ որոշված իրական արժեքի փոխանցում	-	(1,640,100)
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը	421,727	(3,844)
Մարումներ	-	164,892
Թողարկումներ	-	(5,752,343)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	4,688,858	(3,953,866)

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է՝ կիրառելով օպցիոնների գնորոշման Black-Scholes մոդելը:

Թեև Խումբը գտնում է, որ իրական արժեքի իր գնահատականները հիմնավոր են, այլ մեթոդների կամ ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել իրական արժեքի այլ չափումների: Պղնձի «քոլարների» իրական արժեքի չափումների համար կիրառված մեկ կամ մի քանի ենթադրությունների փոփոխությունը հնարավոր այլընտրանքային ենթադրությունների կոմենա հետևյալ ազդեցությունը.

հազ. դրամ	Ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա	
	Բարենպաստ	Ոչ բարենպաստ
Տարեկան տատանումների 10% փոփոխություն	216,341	(256,831)

Հնարավոր այլընտրանքային ենթադրությունների կիրառման բարենպաստ և ոչ բարենպաստ ազդեցությունը հաշվարկվել է վերասահմանելով մոդելի արժեքները: Մոդելում կիրառված հիմնական ելակետային տվյալները և ենթադրությունները 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում են.

- Պղնձի ֆորվարդային շուկայական գները 6,189 ԱՄՆ դոլարից 6,349 ԱՄՆ դոլար,
- Պղնձի շուկայական գների ակնկալվող տատանումների տիրույթը (16%-ից 22%):

3-րդ մակարդակ. Մոլիբդենի վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ

Մոլիբդենի խտանյութին վերաբերող վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները դասվում են որպես 3-րդ մակարդակի ակտիվներ: Մոլիբդենի խտանյութի ֆորվարդային գնի վերաբերյալ դիտարկելի տվյալների բացակայության պատճառով, պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքը հաշվարկվել է կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված ամենավերջին գինը, որը Խումբը համարում է ֆորվարդային գնին մոտավորապես հավասարվող գին՝ հաշվի առնելով մոլիբդենի պայմանագրերի գնանշման ժամկետների կարճ տևողությունը:

(գ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Խմբի ենթարկվածության մասին, ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Խմբի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման Խմբի մոտեցումը: Այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության մպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կապակերպացնեն իրենց դերերը և պարտականությունները:

(դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Խմբի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից և ներդրումային արժեթղթերից:

Խումբը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող պատվիրատուների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

(i) Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածությունը առավելագույն չափը:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2014թ.	2013թ.
Բանկային հաշիվների մնացորդներ	936,418	522,200
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	896,914	267,257
	1,833,332	789,457

(ii) Առևտրական դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ու երկրների կողմից հանձն առնված պարտավորությունների չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, մասնավորապես ներկայիս տնտեսական պայմաններում: Խմբի հասույթի մոտ 55% (2013թ-ին՝ 54%) վերագրելի է կապակցված կողմերի հետ իրականացվող վաճառքի գործարքներին:

Հասույթի մնացած մասը վերագրելի է երեք (2013թ-ին՝ երկու) պատվիրատուի հետ իրականացվող վաճառքի գործարքներին: Առ այսօր Խումբը վնաս չի կրել իր առևտրական դեբիտորական պարտքերի գծով:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2014թ.	2013թ.
Հայաստանի Հանրապետություն	558,848	-
Արտերկրներ	102,334	207,132
	661,182	207,132

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն՝ ըստ պատվիրատուների տեսակների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2014թ.	2013թ.
Պղնձի և մոլիբդենի պատվիրատուներ	558,848	-
Այլ արտադրանքի պատվիրատուներ	102,334	207,132
	661,182	207,132

Արժեզրկումից կորուստներ

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը:

հազ. դրամ	Համախառն 2014թ.	Արժեզրկված 2013թ.	Համախառն 2014թ.	Արժեզրկված 2013թ.
	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.
Ոչ ժամկետանց	661,182	-	207,132	-

(iii) Ներդրումներ

Խումբը սահմանափակում է իր ենթարկվածությունը պարտքային ռիսկին՝ ներդրումներ կատարելով միայն իրացվելի արժեթղթերում և գործարքներ կատարելով բարձր վարկանիշ ունեցող պատվիրատուների հետ:

(iv) Բանկային հաշիվների մնացորդներ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 936,418 հազար դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2013թ-ին՝ 522,200 հազար դրամ), որոնք իրենցից ներկայացնում են պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափն այդ ակտիվների գծով: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր պարտքային ռիսկի 7% վերագրելի է «Fitch» գործակալության Ա+ վարկանիշով բանկին (2013թ-ին՝ 16%): 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկի մնացած 93% վերագրելի է հայկական 10 խոշոր բանկերին:

(ե) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Որպես կանոն Խումբն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

2014թ. հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	Ցպահանջ	0-6 ամիս	6-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ							
Գրավով ապահովված բանկային վարկ	51,470,664	61,597,636	-	10,086,618	9,881,419	19,069,545	22,560,054
Գրավով ապահովված բանկային վարկային զիծ	4,237,313	4,237,313	-	14,810	4,222,503	-	-
Գրավով ապահովված բանկային վարկային զիծ	4,235,843	4,235,843	-	13,055	4,222,788	-	-
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,379,624	2,379,624	2,379,624	-	-	-	-
Պայմանականորեն զնանշվող վաճառքի զծով ստացված կանխավճարներ	5,256,910	5,256,910	-	5,256,910	-	-	-
Տրամադրված ֆինանսական երաշխիքներ	17,626,344	17,626,344	-	17,626,344	-	-	-
	595,770	734,000	-	-	-	734,000	-
	85,802,468	96,067,670	2,379,624	32,997,737	18,326,710	19,803,545	22,560,054

«Ջանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատ» ՓԲԸ
 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2013թ. հազ. դրամ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Գրավով ապահովված բանկային վարկ	53,482,805	68,075,191	5,351,267	9,014,378	17,412,064	36,297,482
Գրավով ապահովված բանկային վարկային գիծ	2,032,344	2,032,344	2,032,344	-	-	-
Գրավով չապահովված փոխառություն բաժնետիրոջից	3,826,137	4,331,833	1,036,350	593,875	1,134,197	1,567,411
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	4,847,462	4,847,462	4,605,073	242,389	-	-
Դուստր կազմակերպության ծեռքերուման համար վճարվելիք գումար	1,568,102	1,568,102	1,568,102	-	-	-
Պայմանականորեն գնանշվող վաճառքի գծով ստացված կանխավճարներ	10,139,844	10,139,844	10,139,844	-	-	-
Տրամադրված ֆինանսական երաշխիքներ	-	936,820	936,820	-	-	-
Տրամադրված ֆինանսական երաշխիք	-	400,000	400,000	-	-	-
	75,896,694	92,331,596	26,069,800	9,850,642	18,546,261	37,864,893
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	3,953,866	3,953,866	165,280	348,339	1,131,859	2,308,388
	3,953,866	3,953,866	165,280	348,339	1,131,859	2,308,388

Վերը ներկայացված բացահայտումներն արտացոլում են դրամական միջոցների հոսքերի զուտ գումարներն ածանցյալ գործիքների համար, քանի որ վերջիններս մարվում են կանխիկով՝ զուտ հիմունքով: Գրավով ապահովված բանկային վարկի համար պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը ներառում են գործարքի ծախսերի գծով դրամական միջոցների հոսքերը:

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

(գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Խմբի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում են ԱՄՆ դոլարը:

Որպես կանոն փոխառություններն արտահայտվում են այն արտարժույթով, որը համապատասխանում է Խմբի գործառնություններից առաջացող դրամական միջոցներին՝ հիմնականում ԱՄՆ դոլարին: Այսպիսով, առաջանում է տնտեսական հեջավորում՝ առանց ամսացյալ պայմանագրեր կնքելու անհարժեշտության:

Արտարժույթով արտահայտված այլ դրամային ակտիվների և պարտավորությունների համար Խմբի քաղաքականությունը պահանջում է ապահովել զուտ ենթարկվածության ընդունելի մակարդակը, գնելով կամ վաճառելով արտարժույթը սփոթ դրույքներով՝ անհրաժեշտության դեպքում կարճաժամկետ անհավասարակշռությունը վերացնելու համար:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Խմբի ենթարկվածությունն՝ ըստ անվանական գումարների:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված 2014թ.	ԱՄՆ դոլարով արտահայտված 2013թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	558,848	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,154	83,875
Վարկեր և փոխառություններ	(62,323,444)	(59,341,286)
Պայմանականորեն գնանշվող վաճառքի գծով ստացված կանխավճարներ	(17,626,344)	(9,976,410)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(1,111,860)	(1,369,830)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	4,688,858	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	(3,953,866)
Զուտ ենթարկվածություն	(75,751,788)	(74,557,517)

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

ՀՀ դրամով	Միջին դրույք		Սփոթ դրույքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.
1 ԱՄՆ դոլար	415.76	409.60	474.97	405.64

Ջգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 20%-ով արժևորումը/(արժեզրկումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը նախքան հարկումը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Խումբը դիտարկում է որպես խելամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2013թ. համար, բացառությամբ այն փաստի, որ 2013թ. համար դիտարկվել է ՀՀ դրամի փոխարժեքի 10%-ով արժևորում/(արժեզրկում) ԱՄՆ դոլարի նկատմամբ:

հազ. դրամ	Արժևորում		Արժեզրկում	
	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2014թ.	-	15,150,358	-	(15,150,358)
31 դեկտեմբերի 2013թ.	-	7,455,751	-	(7,455,751)

(ii) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Դեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական գործիքի առումով ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Կառուցվածքը

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2014թ.	2013թ.
Ֆիքսված դրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	(8,473,156)	(2,032,344)
Փոփոխական դրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	(53,850,288)	(57,308,942)

Իրական արժեքի զգայունության վերլուծություն ֆիքսված դրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական գործիքները որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Դրամական միջոցների զգայունության վերլուծություն փոփոխական դրույքով գործիքների համար

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունը 100 բազիսային կետով կաճելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը նախքան հարկումը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2013թ. համար:

հազ. դրամ	Շահույթ կամ վնաս	
	100 բկ աճ	100 բկ նվազում
2014թ.		
Փոփոխական դրույքով գործիքներ	(538,502)	538,502
2013թ.		
Փոփոխական դրույքով գործիքներ	(573,089)	573,089

(iii) Ապրանքների գնային ռիսկ

Խմբի ենթարկվածությունը ապրանքների գնային ռիսկին պայմանավորված է պղնձի և մոլիբդենի խտանյութի գներով: Այս ապրանքների ֆորվարդային գները հաշվետու ամսաթվի դրությամբ ազդեցություն ունեն վաճառքի պայմանագրերի պարունակվող ածանցյալ գործիքների վրա:

Զգայունության վերլուծություն

Հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանականորեն գնանշվող վաճառքներին վերաբերող պղնձի և մոլիբդենի ֆորվարդային գների 10% փոփոխությունն ազդեցություն կունենար նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2013թ. համար:

հազ. դրամ	Ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա	
	Բարենպաստ	Ոչ բարենպաստ
2014թ.		
Ֆորվարդային գների 10% փոփոխություն	2,049,088	(2,890,230)
2013թ.		
Ֆորվարդային գների 10% փոփոխություն	1,121,657	(1,922,348)

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների (պղնձի օպցիոնների) զգայունության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 26-ի (գ) կետում:

(ե) Կապիտալի կառավարում

Խմբի չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն դեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ իր գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա կարելի է իրագործել դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Խմբի հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Խմբի գործառնական գործունեության դրամական միջոցների հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի, ինչպես նաև վարկերի ու փոխառությունների միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

27 Խոշոր դուստր կազմակերպություն

Դուստր կազմակերպություն	Գրանցման երկիրը	2014թ.	2013թ.
		Սեփականություն/ ձայնի իրավունք	Սեփականություն/ ձայնի իրավունք
«Լեռ-Էքս» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

2012թ. ընթացքում Խումբը ձեռք է բերել «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը:

28 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկլարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(գ) Շրջակա միջավայրի պահպանության

Խմբի գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով և կանոնակարգերով, որոնք կառավարում են օդը և ջուրը աղտոտող նյութերի արտանետումը, վնասակար նյութերի ու թափոնների և այլ թունավոր նյութերի արտադրությունը, գործածումը, պահպանումը և արտանետումը: Խումբը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ դեկլարությունը հավանական չի համարում մնալ պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությունը զարգացման փուլում է, և այդ օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են էական պարտավորություններ առաջացնել ապագայում:

(դ) Կապիտալ պարտավորվածություններ

2014թ. ընթացքում Խումբը շարունակել է կատարել սարքավորումների և ծառայությունների առք ու վաճառքի պայմանագրերով նախատեսված իր պարտականությունները, ինչպես նաև կնքել է մի քանի նոր պայմանագիր: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պայմանագրերի հետ կապված պարտավորվածությունները կազմում են 2,395,924 հազար դրամ (2013թ-ին՝ 4,005,268 հազար դրամ):

29 Գործառնական ռիսկեր

(ա) Հանքեր

Հանքերն ըստ իրենց էության ենթակա են բազմաթիվ գործառնական ռիսկերի և գործոնների ազդեցության, որոնք, որպես կանոն, գտնվում են Խմբի վերահսկողության սահմաններից դուրս և կարող են ազդեցություն ունենալ Խմբի գործունեության, գործառնական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս գործառնական ռիսկերը և գործոնները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ (i) գրունտի և ջրի անկանխատեսելի պայմանները և ջրօգտագործման իրավունքների հետ կապված անբարենպաստ հայցերը, (ii) երկրաբանական խնդիրները, ներառյալ երկրաշարժերը և այլ բնական աղետները, (iii) մետալուրգիական և մշակման այլ գործընթացների հետ կապված խնդիրները, (iv) արտատվոր եղանակային կամ գործառնական պայմանները և այլ ֆորս-մաժորային իրադարձությունները, (v) հանքաքարի ակնկալվողից ցածր որակը կամ կորզման դրույքները, (vi) վթարները, (vii) կառավարության կողմից անհրաժեշտ թույլտվությունների ոչ ժամանակին կամ ընդհանրապես չտրամադրումը, (viii) դատական վարույթների արդյունքները, ներառյալ ընդունված որոշումների բողոքարկումը, (ix) հետազոտման և մշակման աշխատանքների հետ կապված անորոշությունները, (x) փոխադրման ուշացումները, (xi) աշխատանքային վիճաբանությունները, (xii) համապատասխան ապահովագրական փաթեթ ձեռք բերելու անկարողությունը, (xiii) նյութերի և սարքավորումների բացակայությունը, (xiv) գործունեության

հատկորոշումների կամ ակնկալիքների համաձայն սարքավորումների գործելու կամ գործընթացների ընթանալու անկարողությունը, (xv) անկանխատեսելի դժվարությունները՝ ձեռք բերված միավորումների համախմբման և ակնկալվող միասնության ձեռք բերման հետ կապված և (xvi) ֆինանսավորում ստանալու փորձերի արդյունքները և ֆինանսական շուկայի պայմանները:

(բ) Պղնձի և մոլիբդենի գների տատանումներ

Խմբի ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է պղնձի գնից, որի վրա ազդեցություն ունեն Խմբի վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Պղնձի առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի մետաղների բորսայում (LUF), Նյու Յորքի ապրանքային բորսայում (COMEX) և Շանհայի ֆյուչերսների բորսայում (ՇՖԲ): Խմբի պղնձը վաճառվում է LUF գնանշվող գներով: Այս բորսայում ներկայացվող պղնձի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) պղնձի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ինդուստրիալ արտադրության միտումները և բնակարանաշինության ու ավտոմոբիլային արդյունաբերության պայմանները, որոնցից բոլորը կորելացվում են պղնձի պահանջարկի հետ, (iii) Չինաստանի տնտեսական աճն ու քաղաքական պայմանները, որը դարձել է մաքուր պղնձի աշխարհի ամենախոշոր սպառողը, և այլ զարգացող տնտեսությունները, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը պղնձի և պղնձի ֆյուչերսների հետ կապված, (v) փոխարինող նյութերի առկայությունը և արժեքը և (vi) փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Պղնձի շուկան բնորոշվում է փոփոխական և ցիկլային բնույթով: 2014թ. ընթացքում LUF-ի մեկ տոննա պղնձի ամսական միջին փակման սփոթ գները տատանվել են 6,423 ԱՄՆ դոլարից 7,295 ԱՄՆ դոլար: 2015թ. մայիսի 19-ին LUF-ի մեկ տոննա պղնձի փակման սփոթ գինը կազմել է 6,270 ԱՄՆ դոլար:

Պղնձի ցածր գների գերակայման երկարատև ժամանակաշրջանը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի շահույթի և դրամական միջոցների հոսքերի վրա:

Խմբի ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է նաև մոլիբդենի գնից: Մոլիբդենի գինը փոփոխական և ցիկլային է ինչպես պղնձինը, եթե ոչ ավելի: Մոլիբդենի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ՝ (i) մոլիբդենի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, հատկապես շինարարության և ենթակառուցվածքների ոլորտում, որոնք պահանջում են պողպատի զգալի պաշարներ, (iii) որպես պղնձի արտադրության հավելյալ արտադրատեսակ արտադրվող մոլիբդենի ծավալները, (iv) պաշարների չափերը, (v) փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը և (vi) ԱՄՆ-ի և արտերկյա մրցակիցների արտադրական ծախսերը:

Մոլիբդենի պահանջարկը զգալիորեն կախված է համաշխարհային մասշտաբով պողպատի արդյունաբերությունից, որը այս մետաղը օգտագործում է որպես կարծրացնող և քայքայումը կանխարգելող նյութ: Մոլիբդենի արտադրության մոտավորապես 80 տոկոսը օգտագործվում է այս նպատակի համար: Մնացած պաշարներն օգտագործվում են մասնագիտացված քիմիկատների, մասնավորապես, կատալիզատորների, ջրազերծման ռեակտիվների, քսանյութերի արտադրությունում: Մոլիբդենի համաշխարհային պաշարների մոտավորապես 65 տոկոսը հանդիսանում է պղնձի արդյունահանման հավելյալ արտադրանք, որի վրա այդքան էլ մեծ ազդեցության չունեն մոլիբդենի գները:

2014թ. ընթացքում մոլիբդենի օբսիդի միջին գինը կազմել է մոտավորապես 28,405 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար, ի համեմատություն 2013թ., երբ այն կազմում էր 22,621 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար: 2015թ. մայիսի 19-ին LUF-ի մեկ տոննա մոլիբդենի օբսիդի սփոթ գինը կազմել է 17,300 ԱՄՆ դոլար:

Մոլիբդենի ցածր գների գերակայման երկարատև ժամանակաշրջանը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Խմբի շահույթի և դրամական միջոցների հոսքերի վրա:

30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1677-Ա որոշման համաձայն Ընկերությունը սեփականաշնորհվեց պետության կողմից, և սկսած 2005թ. հունվարի 1-ից Խմբի սեփականատերերի կազմը հետևյալն է՝

«Քրոնիմետ Մայնինգ» ԷՅ-Ջի	60%
«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ (99.3% սեփականատերն է հանդիսանում «Քրոնիմետ Հոլդինգ» ՍՊԸ)	15%
«Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ	12.5%
«Ջանգեզուր Մայնինգ» ՍՊԸ	12.5%

Խմբի վերջնական մայր կազմակերպությունն է հանդիսանում «Քրոնիմետ Վերվալտունգ» ՍՊԸ-ն, որը վերահսկվում է Պիլարսկի ընտանիքի կողմից:

Խմբի մայր կազմակերպությունը ներկայացնում է հանրության կողմից օգտագործման համար հասանելի ֆինանսական տեղեկատվություն:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Առանցքային ղեկավար անձնակազմը և նրանց ընտանիքների անդամները վերահսկում էին Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 12.5%-ը մինչև 2014թ. հուլիսի 1-ը:

(գ) Տնօրենների խորհրդի անդամների և առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում (ծանոթագրություն 11):

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ		
Տնօրենների խորհրդի անդամներ	361,713	-
Առանցքային ղեկավար անձնակազմ	867,078	908,271
	1,228,791	908,271

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Խմբի գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

(i) Հասույթ

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2014թ.	Գործարքի արժեքը 2013թ.	Մնացորդը 2014թ.	Մնացորդը 2013թ.
Մոլիբդենի խտանյութի վաճառք Բաժնետերեր	38,156,010	33,986,719	(5,834,023)	(2,840,394)
Պղնձի խտանյութի վաճառք Վերջնական վերահսկող կողմի նշանակալի ազդեցության ներքո գտնվող կազմակերպություն	25,065,485	27,718,799	(9,962,301)	(2,175,675)
Այլ արտադրանքի վաճառք Տնօրենների խորհրդի նշանակալի ազդեցության ներքո գտնվող կազմակերպություններ	124,433	236,498	17,407	132,457
Մատուցված ծառայություններ (այլ եկամուտ)				
Տնօրենների խորհրդի նշանակալի ազդեցության ներքո գտնվող կազմակերպություններ	4,065	970	-	226
	63,349,993	61,942,986	(15,778,917)	(4,883,386)

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ: Կապակցված կողմերի հետ իրականացվող մոլիբդենի և պղնձի խտանյութի վաճառքի գործարքների արժեքը չի ներառում վաճառքի պայմանագրերում պարունակվող անանցյալ գործիքները:

(ii) Ծախսեր

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2014թ.	Գործարքի արժեքը 2013թ.	Մնացորդը 2014թ.	Մնացորդը 2013թ.
Նյութերի ձեռքբերում				
Բաժնետեր	5,320	-	-	-
Տնօրենների խորհրդի նշանակալի ազդեցության ներքո գտնվող կազմակերպություններ	20,564,104	2,011,124	(419,112)	(30,694)
Հիմնական միջոցների ձեռքբերում				
Տնօրենների խորհրդի նշանակալի ազդեցության ներքո գտնվող կազմակերպություններ	88,680	457,422	(2,974)	(6,832)
Ստացված ծառայություններ				
Մայր կազմակերպություն	52,456	-	-	-
Տնօրենների խորհրդի նշանակալի ազդեցության ներքո գտնվող կազմակերպություններ	5,479,447	2,897,316	(1,301,926)	(207,956)
	26,190,007	5,365,862	(1,724,012)	(245,482)

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

(iii) Փոխառություններ

հազ. դրամ	Փոխառության գումարը 2014թ.	Փոխառության գումարը 2013թ.	Մնացորդը 2014թ.	Մնացորդը 2013թ.
Ստացված փոխառություններ				
Բաժնետեր	-	-	-	(3,826,137)
Բաժնետերերի նշանակալի ազդեցության ներքո գտնվող կազմակերպություններ	2,510,740	-	(2,379,624)	-

31 Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ՝

- հիմնական միջոցների, որոնք վերագնահատվել են եկալետային արժեքը որոշելու համար՝ որպես որպես ՖՀՄՄ-ներին անցման մաս,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

32 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Համախմբման հիմունքներ

(i) Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որն այն ամսաթիվն է, երբ վերահսկողությունը փոխանցվում է Խմբին: Վերահսկողությունը կազմակերպության ֆինանսական և տնտեսական քաղաքականության կառավարման իրավունքն է՝ նրա գործունեությունից օգուտների ստանալու նպատակով: Վերահսկողությունը զննահատելիս Խումբը հաշվի է առնում տվյալ պահին օգտագործելի ձայնի իրավունքները:

Խումբը գոյվիլի չափումն իրականացնում է ձեռքբերման ամսաթվին որպես՝

- փոխանցված հատուցման իրական արժեք, գումարած
- ձեռքբերվող կազմակերպությունում չվերահսկվող բաժնեմասերի ճանաչված գումարը, գումարած
- ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում՝ ձեռքբերվող կազմակերպությունում նախկինում գոյություն ունեցող բաժնեմասը, հանած
- ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների գուտ ճանաչված գումարը (որպես կանոն՝ իրական արժեքը):

Երբ տարբերությունը բացասական է, գեղչով ձեռքբերման գծով շահույթը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխանցված հատուցումը չի ներառում նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը վերաբերող գումարները: Նման գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկման հետ կապված ծախսերի, որոնք Խումբը կրում է ձեռնարկատիրական գործունեության միավորման հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

(ii) Դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպությունում չվերահսկվող բաժնեմասերի նկատմամբ կիրառելի վնասը բաշխվում է չվերահսկվող բաժնեմասերին նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկվող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

(iii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս բացառվում են ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը: Բաժնային մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների հետ իրականացվող գործառնություններից առաջացող չիրացված շահույթը բացառվում է ներդրման դիմաց՝ ներդրման օբյեկտում Խմբի ունեցած բաժնեմասի չափով: Չիրացված վնասը բացառվում է մույն եղանակով, ինչ որ և չիրացված շահույթը, սակայն միայն մինչև այն գումարը, որի համար գոյություն չունի արժեզրկման հայտանիշ:

(բ) Հասույթ

Վաճառված ապրանքներ

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե գոյություն ունի հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել, ապա զեղչը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

Սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցման ժամկետը կախված է առանձին վաճառքի պայմանագրերի պայմաններից: Փոխանցումը սովորաբար տեղի է ունենում, երբ արտադրանքը ստացվում է պատվիրատուի պահեստում, այնուամենայնիվ, որոշ միջազգային առաքումների համար փոխանցումը տեղի է ունենում, երբ արտադրանքը փաստացի հասնում է նախապես համաձայնեցված վայր Երևանում:

Խմբի խտանյութի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է անհատական վաճառքի պայմանագրերում՝ հիմք ընդունելով մոտիվների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի պատմական արժեքն ընդհանուր գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից՝ միջինացված գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, պղնձի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երեք ամիս, իսկ մոլիբդենի համար՝ երկու ամիս փոխադրման ամսից հետո:

Խմբի պայմանականորեն գնանշվող վաճառքի պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք ապրանքի վաճառքին առնչություն չունենալու պատճառով, պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակներով: Պարունակվող ֆինանսական գործիքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես դեբիտորական պարտք կամ պայմանականորեն գնանշվող վաճառքների գծով ստացված կանխավճար՝ համապատասխան ճշգրտում կատարելով հասույթի գծով և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) հասույթի միջոցով՝ հաշվի առնելով ապրանքի ֆորվարդային կորը մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը:

(գ) Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Խմբի հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Խմբի աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(դ) Ֆինանսական եկամուտ և ծախս

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը
- շահաբաժինների գծով եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- տեղանքի վերականգնման գծով պահուստի գեղչի ծախսագրումը և արձակման նպաստների գծով պահուստը,
- զուտ իրական արժեքի գծով վնաս շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Շահաբաժինների գծով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն օրը, երբ հաստատվում է վճարում ստանալու Խմբի իրավունքը, որը, գնանշվող արժեթղթերի դեպքում, սովորաբար հանդիսանում է «առանց շահաբաժինների» ամսաթիվը:

Որակավորված ակտիվների ձեռք բերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն ոչ վերագրելի փոխառության ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ զուտ շահույթի կամ զուտ վնասի:

(ե) Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ոչ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(գ) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(i) Արձակման նպաստներ

Արձակման նպաստները ծախսագրվում են, երբ Ընկերությունն արդեն չի կարող չեղյալ համարել նշված նպաստների առաջարկը: Եթե արձակման նպաստների ամբողջական վճարումը չի ակնկալվում հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում, ապա արձակման նպաստները զեղչվում են:

(ե) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով հարկի վճարվելիք կամ ստացվելիք գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններիս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Ռոյալթիների գծով ընդհանուր ծախսն իրենից ներկայացնում է թույլատրելի նվազեցվող ծախս՝ հարկվող շահույթի հաշվարկման նպատակների համար:

(ը) Ռոյալթիներ

Ռոյալթիները պետական բյուջե վճարման ենթակա գումարներն են, որոնք հաշվարկվում են կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն և հիմնված են լիցենզավորված գործառնությունների շահութաբերության մակարդակների վրա: Ռոյալթիները հաշվարկելիս կիրառվում են այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Ռոյալթիները ճանաչվում են շահույթում կամ վնասում տարեկան կտրվածքով՝ հիմք ընդունելով հասույթի և հարկվող եկամտի համակցությունը՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն: Ռոյալթիները բաղկացած են երկու բաղադրիչից՝ հասույթի 4%-ի չափով հաշվարկվող ռոյալթի և հարկվող շահույթի 12.5%-ի չափով հաշվարկվող ռոյալթի՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն:

Ղեկավարությունը գտնում է, որ ռոյալթիների գծով ծախսն իրենից շահութահարկ չի ներկայացնում, քանի որ ընդհանուր հասույթի գործոնը (համախառն ցուցանիշը) էական է վճարվելիք ռոյալթի գումարի որոշման գործընթացում: Ռոյալթիները հաշվառվում են որպես այլ գործառնական ծախսեր:

(թ) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հոգրությունը: Պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքը հաշվարկվում է կշռված միջին արժեքի սկզբունքով:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(Ժ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները, բացառությամբ հողի, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվի՝ 2007թ. հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվել էր հիմք ընդունելով վերջիններիս իրական արժեքն այդ ամսաթվի դրությամբ («Ելակետային սկզբնական արժեք»):

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Մեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խույմը կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Արտադրական հոսքագծում օգտագործվող ակտիվների գծով մաշվածությունը հաշվառվում է կիրառելով արդյունքի միավորի մեթոդը՝ հիմք ընդունելով հանքաքարի ընդհանուր գնահատված պաշարները և փաստացի արդյունահանված ու մշակված հանքաքարը: Բոլոր այլ ակտիվների գծով մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվառվում:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- Շենքեր
 - որոշ արտադրական շենքեր և շինություններ արդյունքի միավորների մեթոդ 4-ից 60 տարի
 - այլ շենքեր
- Հիմնական միջոցներ
 - պոլերի հեռացման և տեղափոխման կառույցներ ու սարքավորումներ արդյունքի միավորների մեթոդ 3-ից 100 տարի
 - այլ հիմնական միջոցներ 98 տարի
- Հանքարդյունաբերական ակտիվներ 1-ից 10 տարի
- Տնտեսական գույք

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(հ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Համակարգչային ծրագրեր

Խմբի կողմից ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեքկումից կորուստները:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ դրան փոխարինող այլ գումարի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում սկսած այն պահից, երբ դրանք դառնում են մատչելի օգտագործման համար, քանի որ այս մեթոդն առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն է.

- Հաշվապահական ծրագիր 10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(i) Հետախուզման և գնահատման ակտիվներ

Հետախուզման և գնահատման ծախսումները վերաբերում են հանքերի պոտենցիալ պաշարների հետախուզման և գնահատման ժամանակ կրած ծախսումներին ու ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են երկրաբանական և գեոֆիզիկական ծախսումները, հետախուզման հորատման ծախսումները, մուշների փորձարկման ծախսումները, մոնիթինգ և արտադրական սարքավորումների գծով ծախսումներն ու հետախուզական աշխատանքների հետ կապված վերադարձվող ծախսերը:

Հետաքրքրություն ներկայացնող յուրաքանչյուր տեղամասի հետախուզման և գնահատման ծախսումները կապիտալացվում ու արտացոլվում են հաջորդ ժամանակաշրջանում որպես ակտիվ՝ ստորև ներկայացված պայմաններից որևէ մեկին համապատասխանելու դեպքում.

- նման ծախսումների փոխհատուցումն ակնկալվում է հետաքրքրություն ներկայացնող տեղամասի հաջորդ մշակման և հետազոտման կամ, որպես այլընտրանքային տարբերակ՝ վերջինիս վաճառքի միջոցով, կամ
- հետաքրքրություն ներկայացնող տեղամասում իրականացվող հետախուզման և գնահատման աշխատանքները դեռ չեն հասել այնպիսի փուլի, որը թույլ է տալիս ըստ պատշաճի գնահատել տնտեսապես փոխհատուցելի պաշարների առկայությունը կամ հակառակը, ինչպես նաև տեղամասում պլանավորվում է շարունակել կամ ապագայում իրականացնել ակտիվ և զգալի աշխատանքներ:

Հետախուզման և գնահատման ակտիվները դասակարգվում են նյութական և ոչ նյութական ակտիվների՝ ելնելով դրանց բնույթից: Հետախուզման և գնահատման ակտիվների վերը նշված դասակարգումը դադարում է, երբ բացահայտ են դառնում հանքի շահագործման տեխնիկական նպատակահարմարությունը և առևտրային կենսունակությունը:

Կոմերցիոն տեսանկյունից շահութաբեր պահուստներ հայտնաբերելիս՝ հետախուզման և գնահատման ակտիվները ստուգվում են արժեզրկման տեսանկյունից և փոխանցվում են մշակման նյութական և ոչ նյութական ակտիվների դասակարգ: Հետախուզման և գնահատման փուլում մաշվածություն և/կամ ամորտիզացիա չի հաշվարկվում:

Նախքան հանքերի շահագործման իրավունքի ձեռքբերումն իրականացվող գործունեությունը համարվում է նախահետախուզություն: Նախահետախուզության գծով ծախսումները ծախսագրվում են և ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են ծրագրի սկզբնական տեխնիկական ու տնտեսական գնահատման, հանքաքարի երկրաբանական մոդելի սահմանման և գնահատման, հետախուզությանը նախորդող աշխատանքների հետ կապված վերադարձվող ծախսերը:

(ii) Ֆինանսական գործիքներ

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները փոխառությունների և դեբիտորական պարտքերի ու վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերին:

Խումբը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում

Խումբը փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Խմբի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով գուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Խումբն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Խումբն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Խմբի ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասը ներառում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերը և դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և ընթացիկ բանկային հաշիվները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այն ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված փոխառություններ ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունները, բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային գործիքների գծով փոխարժեքային տարբերությունների, ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և ներկայացվում են սեփական կապիտալում՝ իրական արժեքի պահուստում: Երբ ներդրումը ապաճանաչվում կամ արժեզրկվում է, սեփական կապիտալում կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի: Չգնանշվող բաժնային գործիքները, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հաշվառվում են սկզբնական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներառում են բաժնային արժեթղթերը:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում

Խումբը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Նման ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները ու առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(iii) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք իրենցից ներկայացնում են առքի և վաճառքի օպցիոններ պղնձի խտանյութի գծով: Խումբը պահում է ապրանքային օպցիոնները հեջավորման նպատակով:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես:

Ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչման ժամանակ դրա իրական արժեքի լավագույն վկայությունը գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը, բացառությամբ եթե այդ գործիքի իրական արժեքի մասին վկայությունը ստացվում է նույն գործիքի գծով (այսինքն՝ առանց վերափոխման կամ «վերափաթեթավորման») այլ դիտարկելի ընթացիկ շուկայական գործարքների հետ համեմատությամբ միջոցով, կամ գնահատման մի մոդելի հիման վրա, որի փոփոխականները ներառում են տվյալներ միայն դիտարկելի շուկաներից: Եթե գործարքի գինը տրամադրում է իրական արժեքի լավագույն վկայությունը սկզբնական ճանաչման ժամանակ, ապա ֆինանսական գործիքը սկզբնապես չափվում է գործարքի գնով, և այս գնի ու գնահատման մոդելի կիրառման արդյունքում սկզբնապես ձեռքբերված արժեքի տարբերությունը հետագայում ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ քան գնահատման ամբողջական հիմնավորումը դիտարկելի շուկայական տվյալներով կամ գործարքի ավարտը:

Սկզբնական ճանաչման պահին գործարքի գնի և այն գումարի տարբերությունը, որը կորոշվեր նշված ամսաթվի դրությամբ, կիրառելով գնահատման մեթոդն այնպիսի իրավիճակում, երբ գնահատումը կախված է ոչ դիտարկելի տվյալներից, անմիջապես չի ճանաչվում շահույթում կամ վնասում, այլ ճանաչվում է գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կամ այն դեպքում, երբ գործիքը մարվում է, փոխանցվում է կամ վաճառվում է, կամ դրա իրական արժեքը դառնում է դիտարկելի:

Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և դրանց փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Պարունակվող ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի ու հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն. առանձին գործիքը, որի պայմանները նման են պարունակվող ածանցյալ գործիքի պայմաններին, բավարարում է ածանցյալ գործիքի սահմանմանը, և համակցված գործիքը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Առանձնացվող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

(iv) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

(ծ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերը) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Խմբին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, փոխառումների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները, տնտեսական պայմանները, որոնք կապված են ակտիվների գծով ձախողումների կամ աժեթթղթի համար ակտիվ շուկայի վերացման հետ, դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին: Բացի այդ, բաժնային արժեթղթերում կատարած ներդրումների համար արժեզրկման անկողմնակալ վկայություն է համարվում իրական արժեքի էական կամ երկարաձգված նվազումը:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Խումբը փոխառությունները և դեբիտորական պարտքերը դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի փոխառությունները և դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի փոխառությունների և դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Փոխառությունները և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով փոխառությունները և դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է պարտականությունների չկատարման ճախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի ճախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում և արտացոլվում պահուստային հաշվում՝ փոխառությունների և դեբիտորական պարտքերի դիմաց: Խումբը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են վերադասակարգելով սեփական կապիտալի իրական արժեքի պահուստում կուտակված վնասը շահույթի կամ վնասի: Սեփական կապիտալից շահույթ կամ վնաս վերադասակարգված կուտակված արժեզրկումից կորստի գումարը իրենից ներկայացնում է ձեռքբերման արժեքի (հանած հիմնական գումարի ցանկացած մարում և ամորտիզացիա) և ընթացիկ իրական արժեքի միջև տարբերությունը՝ հանած ճախկինում այդ ֆինանսական ակտիվի գծով շահույթում կամ վնասում ճանաչված ցանկացած արժեզրկումից կորուստ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմանը վերագրելի արժեզրկման պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի իրական արժեքն աճել է, և այդ աճը կարելի է անկողմնակալ ձևով կապել մի դեպքի հետ, որը տեղի է ունեցել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորուստը ճանաչելուց հետո, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձման գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերի իրական արժեքի հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներդրում:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ համաձայն վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այլ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են՝ դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինեք, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինեք:

(կ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեռքի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(i) Տեղանքի վերականգնում

Խմբի բնապահպանության քաղաքականության և կիրառելի օրենսդրական պահանջների համաձայն աղտոտված հողատարածքի գծով տեղանքի վերականգնման պահուստը և հարակից ծախսերը ճանաչվում են հողատարածքի աղտոտման պահին:

Համապատասխան ակտիվը ճանաչվում է հիմնական միջոցների կազմում: Տեղանքի վերականգնման ծախսերը հաշվառվում են պարտավորությունը մարելու համար ակնկալվող ծախսերի ներկա արժեքով՝ կիրառելով դրամական միջոցների գնահատված հոսքերը: Դրամական միջոցների հոսքերը զեղչվում են նախքան հարկումը գործող ռիսկի գործոն չպարունակող դրույքով: Ջեղչի վերականգնումը ծախսագրվում է կատարվելու ժամանակ և ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես ֆինանսական ծախս:

Յուրաքանչյուր տարվա վերջում Խումբը վերաչափում է տեղանքի վերականգնման պահուստը՝ հիմք ընդունելով հաշվարկային գումարի լավագույն գնահատականը և զեղչի շուկայական դրույքը:

Տեղանքի վերականգնման պահուստի փոփոխությունները, որոնք պայմանավորված են պարտականությունը կատարելու համար պահանջվող տնտեսական օգուտները պարունակող ռեսուրսների արտահոսքի գումարի կամ ժամկետների փոփոխություններով, կամ զեղչի դրույքի փոփոխությամբ, ավելացվում են համապատասխան ակտիվի սկզբնական արժեքին կամ նվազեցվում են այդ ակտիվի սկզբնական արժեքից ընթացիկ ժամանակաշրջանում: Ակտիվի սկզբնական արժեքից նվազեցրած գումարը չպետք է գերազանցի դրա հաշվեկշռային արժեքը: Եթե պարտավորության նվազեցումը գերազանցում է ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա այդ գերազանցող գումարը պետք է ճանաչվի անմիջապես շահույթում կամ վնասում:

Համապատասխան ակտիվի մաշվածության ենթակա գումարը հաշվարկվում է դրա օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Երբ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետը հասնում է իր ավարտին, տեղանքի վերականգնման պահուստի բոլոր հետագա փոփոխություններ ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակ:

(ii) Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Խումբը կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում: Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ համաձայն կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը ճանաչվում է, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

33 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Խմբի գործունեության վրա: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Նոր կամ փոփոխված ստանդարտ	Պահանջների ամփոփ նկարագիր	Հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
ՖՀՄՍ 9 <i>«Ֆինանսական գործիքներ»</i>	2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտի գործող ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը պարունակում է վերանայված ուղեցույցներ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման համար, ներառյալ ֆինանսական ակտիվների արժեզրկման հաշվարկի համար կիրառվող նոր սպասվող վնասի մոդելը, և հեջի ընդհանուր հաշվառմանը վերաբերող նոր պահանջները: Այն ներառում է նաև ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական գործիքների ճանաչման ու ապահովման ուղեցույցները: ՖՀՄՍ 9- կգործի 2018թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:	Խումբը դեռ չի վերլուծել նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:
ՖՀՄՍ 15 <i>«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հասույթ»</i>	ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինում է հասույթի ճանաչման ներկայումս գործող ուղեցույցները, ներառյալ ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» և ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» պահանջները: Նոր ստանդարտի հիմնական սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը՝ ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն գումարով ներկայացնելու համար, որն արտացոլում է հատուցումը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների կամ ծառայությունների դիմաց: Նոր ստանդարտով կպահանջվեն նաև լրացուցիչ բացահայտումներ հասույթի համար, կտրամադրվի ուղեցույց նախկինում համապարփակ կերպով չուսումնասիրվող գործառնությունների համար, կկատարելագործվեն մի քանի բաղադրիչներից բաղկացած համաձայնություններին վերաբերող ուղեցույցները: ՖՀՄՍ 15 կգործի 2017թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:	Խումբը գնահատում է ՖՀՄՍ 15-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա: